

ՄԱԿԱՐ ԲԱՐԽՈՒՂԱՐՅԱՆԻ «ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ»-Ը
ԵՎ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՁԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ*

Զինահիդա Բալայան

Բանակի բառեր՝ 1886թ., գրաքար, աշխարհաքար, գրախոսություններ, «Գաղտնիք Ղարաբաղի», պատմական ուսումնասիրություն, Լեռ, «Վէ՞պ թէ պատմութիւն», հերմենեւտիկ, աքսիոլոգիական:

Մ. Բարխուղարյանի «ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆՑ» երկի մեջ կատարված առարկումներն իր մեկնարան Լեոյին բավական լուրջ գրականագիտական քննումներ են ներկայացնում թե՛ որպես պատմական փաստեր, թե՛ որպես քննական մորքի ու գեղարվեստական խոսքի հմուտ որուերումներ: Ահա մի օրինակ եւս. «Շուշին պաշտպանողն ոչ եթէ խանն էր, այլ Հայերն ինչպէս Աղա-Մամատ-խանի, նոյնպէս Արա-Միրզայի և 1826-ին Ռէուտի ժամանակ: Եթէ արդարե, ըստ պարոնի այդ խանն էր Շուշին պաշտպանողն, ի՞նչ պատճառաւ այդ իսկ խանն Շուշուց փախաւ 1806-ին, բայց զիսատուեցաւ Հայ-քաջերի թրով: 1795-ին Շուշում գումարուած Հայ մելիքներն և զօրքն «փայտից տաշած արձաններ չէին», որ թողնէին խանին «քնաջինց անել» խնածախցի և Պալլումեցի քաջերի գերդաստանները»[1]:

«Գաղտնիք»-ում հետաքրքրի մաս են կազմում գիմվորական ժողովները: Լեռն զարմացած է, թե ինչու ժողովը նախագահող ատենաբանը գտնում է, որ «Աղա-Մամադ-Շահը խոստացել է ջնջել Ղարաբաղում Ճըռ-խանութիւնը և Ճըռ-մելիքութիւնը, ջնջել իր երկրի մահմետական կառավարութիւնը յօգուտ հայերի, որոնց խաթրին խօսք է տալիս երկրից արտաքսել իր հաստակիցներին, որոնք հաստատ քնակութիւն ունեն հիմնած»[2]: Այդուհանդերձ, գրքում հերոսների կերպարային բնութագրումները տրված են համոզիչ եւ տիպական շերտերով, սյուժեն՝ գեղարվեստական հետաքրքրի հնարանքներով, ժամանակի մարդուն ու նրա ներաշխարհը բացահայտող գծերով:

Լեռն պետք է հասկանար, որ պարսից շահերը ոչ հանուն հայերի սիրուն էին այդ ամենը ցանկանում կատարել, այլ որ վախ էին զգում Ղարաբաղի խաների հեռուն զնացող քաղաքականությունից, օրավոր հզորանալուց եւ ինքնուրոյն քաղաքական միավոր դառնալուց: Չահերը ոչ թե «խաղալիք» էին մելիք Մեղումի ձեռքին, այլ զնահատում էին վերջինիս ճիշտ դատողությունները եւ նվիրվածությունը ու հակած էին Ղարաբաղում օրավոր հզորացող եւ իրենց արարքներում ազատ ու անպատասխանատու գործող խաներին, հեռացնել Ղարաբաղից: Մանավանդ որ այդ վտանգը նաեւ Պարսից պետության դեմ էր ուղղված:

Լեռն ավելի է զարմանում արցախցի շինականի, գորավարի ցուցաբերած մորքի ձկունության վրա, երբ վերջինս (տվյալ դեպքում Քեկնազարյանը նաև) բացատրում է, որ օստարը միշտ օստար է մնում, ունենում է իր կեղծ քաղաքականությունը եւ գործիք է դարձնում արցախցու ննան անքաղաքագետ, ոյուրահավատ, պարզ եւ խեղծ արարածներին:

Եվ զարմացած հեղինակի ներկայացրած գեղարվեստի բարձր ոճից, հերոսների ձկուն ու խեղացի լեզվական արտահայտչամիջոցներից լեռն գրում է. «Որքան զարմանալի բառեր: Այն խաւար ժամանակներում, այդ տգէտ, «խեղծ և պարզ» շինական-

* Հոդվածն ընդունվել է 25.12.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

ների մէջ ո՞րտեղից ընկան այդ նուրբ խօսքերը՝ «քաղաքականութիւն, անքաղաքագէտ»: Երա՞զ է սա թէ ինչ: Այդ իսկ քաղաքականութիւն բառը անյայստ էր մինչև անգամ Աշտարակեցի Ներսէս Վարդապետին (յետոյ կաթողիկոս), որ ինն տարի դրանից յետոյ գրում է. «լուր Եղբայր, առ ինչ արդեօք պարտաւորեցի նա առնել զայնպիսի անուանեալն փոլիթիքայ ընդ հակառակորդ մեր»[3]:

Ինչպես հոգեւոր եւ աշխարհիկ գործիչներից, գիտմականներից շատերը, Ն. Աշտարակեցին եւս տվյալ դեպքում օգտագործել է արդեն նաեւ ոչ հայահունչ, այլ օտարահունչ բառը, որ չի նշանակում, որ նա չգիտեր «փոլիթիքա»-ի հայերեն՝ «քաղաքականություն» հոմանիշ բառը: «Բայց սպասեցէք, պարուններ, ահա և նոյն այդ բոյ գիւղացիք էլ պիտի խօսեն քաղաքականութեան, պօլիտիկայի կամ դիպլոմատիայի վրայ»[4]- հեզնում է «Գաղտնիք»-ի քննադատոր:

Լեռն հերքում է նաեւ Արցախի գորական ուժերի մասին տվյալները՝ դրանք միտունավոր չափազանցություն համարելով:

Գրում է. «Արդութեանցն գրած է թէ Մեծն-Պետրոս խոստացած էր տալ հայոց իբր օժանդակ... 40.000 ռուս զորք:

Երիցեանն թէ 25.000, Բէկնազարեանցն թէ 15.000:

.... Այստեղից պարզ երևում է, որ «Գաղտնիք»-ի հեղինակը զօրով քացանում է օտար պետութեան խոստացած օգնութեան քանակութիւնը, որպէս զի իրան յաջողի այն ժամանակուայ Արցախը ցոյց տալ իբրև մի մեծ ոյժ ունեցող իշխանութիւն: Երկի հենց այդ պատճառով «Գաղտնիք»-ը ոչ մի տեղ չի նկարագրում մահմետականների սուած սաստիկ հարուածները, այնպէս որ կարդացողը մնում է զարմացած, թէ էլ ի՞նչ էին ուզում մելիքները, երբ այդ տեսակ խաղաղ կեամբ էին վարում և այդքան զօրեղ էին»[5]:

«Գաղտնիք»-ում Արցախի զորքի թվաքանակը Բարիսուդարյանը ճիշտ է համարում՝ չնայած Լեռի հերքմանը. «.... անհերքելի ճշմարտութիւն է, որ մեր երկիրը-Կովկասեան նահանգը գրաւելու ժամանակ Ուուսաց զօրքն 15.000-ից աւելի եղած չէ: Այդ զօրքի պակասութիւնը լցրած է տեղական Հայ զօրքն: Այս ճշմարտութիւնը չեն ուրանում և Ուուսաց և Պարսից ժամանակակից յիշատակարաններն, սկսեալ 1795-1826 թիւերն: Ուրեմն այս եզրակացութեամբ ճշմարտութիւնը շահում է Բէկնազարեանցն»[6]:

Լեռն «Գաղտնիք»-ի հեղինակին մեղադրում է գրագորության մեջ՝ պնդելով, թէ Բէկնազարյանցը հետո շարունակում է իր պատմությունը շահերի եւ ռուսների հետ հայերի ունեցած հարաբերությունների մասին՝ համարյա բառ առ բառ կրկնելով Ռաֆֆու խոսքերը:

Բարիսուդարյանը վկայակոչում է Արցախի եւ շրջակա պետությունների գինվորական ուժերի վերաբերյալ Եսայի կաթողիկոսի, Արդությանի, Երիցյանի, Սրապիոնի, այլոց կարծիքները՝ տալով ճիշտ մեկնարանություններ: Հետեւելով Լեռի կրղմից արված դիտողություններին նշում է, որ նա, գլխավորապես խոսելով քաջերի մականունների մասին, չի ընդունում երեք կետ՝ քաջերի մականունները, սրանցից ունանց ուժերը եւ իր գրած «Պարաբաղի բարբառը» (Եր. 30-37):

Ապա քաղվածք է անում Լեռից, որում անդվում է, թէ ինքը չի կարող ուշադրություն չդարձնել նաեւ այդ ժողովին մասնակցող քաջերից մի քանիսի անվան վրա եւ կարծում է, որ դրանով լավ է ճանաչում այդ փիլիսոփա-քաղաքագետ-հրաշակերտ-դյուցազուններին: Բարիսուդարյանը բերում է բավականին փաստեր, որոնք խոսում են վիպապատմական հերոսների կյանքի, կենցաղի, նիստ ու կացի, բնավորության գծերի, հայրենասեր կարքի, միարան ու անմիարան լինելու, ապա նաեւ նրանց վարած կրիվների ու դրանց շուրջ ստեղծված պատմությունների մասին՝ ըստ այդմ էլ բացա-

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

հայտումներ կատարելով հերոսներին տված մականուների շուրջ: **Իսկ գրքում առկա մականունները ժողովրդական հերոսներն ստանում էին ըստ իրենց կատարած արիական սիրանքների:**

«Ա. Հաւտ անձինք, ըստ տեղույն և ըստ կիխային և միանգամայն ըստ ունակութեան, սեպիականացրած են իրեանց առանձնահաստկութիւններ, իսկ տեղական ժողովուրդն առնելով իրաքանչիւրի այդ արտաքին և ներքին առանձնահաստկութիւնից, որոշնած է նոցա վերայ առանձին առանձին և զանազան մականուններ: Մանաւանդ Ասիոյ մէջ գրեթէ, չկայ մի ժողովուրդ, որ գործադրած չինի այդպիսի մականուններ: Բայց մեզ հասած են շատ սակաւ անուններ - միայն պատմութեանց և վէտերի մէջ գրուածներն-իսկ ամյայտացած են դարերի հոլովմանց հետ բազմաթիւ, անգիր անուններ այդպիսիններից....»[7]: Քննաբանը բերում է մականունների շարք տարբեր պատմիչներից: Օրինակ՝ «Գող-Վասիլ, Գայլ-Վահան, Աշոտ-Երկաթ, Աշոտ Ողորմած, Անողորմ-Պետրոս, Կայծակ-Գալուստ վարդապետ, Յոհան-Պոկերերան»: «.... Չիլաղ, Ղարա Սահաթ» (Առաք. պատմ., գլ. Ե): ««Դժնայ Ալաք» (Խոր., գիրք Բ, գլ. Ը): «Գոմէշ Տիկին» (Ուրիայ. տպ. Երուս., Եր. 585): «Կարմրակէլ», «Թոխմազ Սահմուտ» (Զաք. Սարկասագ»): Բ. Արդէն պատմական ուժեղներ եղած են Սամսոն, Հայկ, Մեծն-Տիգրան, Վահագն, Տորք, Տրդատ....: Մի թէ Արցախում սակաւ են ուժեղներ, որոց մենք ականատես ենք.- Ավիաթիւն-Վարդապետն, Քէշշ-օղլին, Պալլումեցի Սագի Ազուխաննեանն, Մանասանն, ևն., Խնածախցի Ասրի Բէլլուեանն, Քէօչարի Սանուչարեան....: Ոեր քանի՛ քանի՛ ուժեղներ կան մեր մէջ Արցախում, զորս ոչ պարոնն զիտէ և ոչ անհոգ և անհետաքրքիր մարդիկ: Եթէ Արցախի ուժեղներն ևս ունեցած լինէին Յունաց և Պարսից Արհլլէսների և Չալերի, Սամսոնի և Տրդատի բախտը, այսօր Հայ գրականութեան մէջ փայլած կը լինէին Արցախի տղամարդոց ուժեղութեան համբաւներն: Ահա այդպէս են ուրեմն Բէկմազարեանցի նկարագրած քաջերի մականուններն ու ոմանց ուժերն ևս»[8]:

Լեռն հեգնում է «Գաղտնիք»-ի հեղինակի լեզվահմացությունը՝ միաժամանակ մեղադրելով թարգմանչին. «Ղարաբաղցին գրելիս աշխատում է որքան կարելի է պահել իր գործածական լեզուն. մենք չենք հաւատում որ Ապրեսը «Տէտէ» գրած լինի»[9]:

«Մենք չենք զարմանում, որ պարոնն,- հերքման գնալով շարունակում է իր խոսքը թարգմանչը,- բոլորովին վստահ, ծերնարկում է իր կարողութիւնից բարձր մի խնդրի, որպիսի է լեզուաքմանական խնդրին: Նա չարաչար սիսալում է, երբ ենթադրում է իրը թէ մենք հետևած ենք Տաճկահայոց աշխարհաբար բարբարին: Պէտք է նա իմացած լինէր, որ իրաքանչիւր հեղինակ պարտաւոր է իբրև ամենախոնարի ծառայ հպատակի հին մատենագրական, նոր գրականական, տեղական եւ օտարական լեզուների կանոններին և պահպանել ամեն մինի հնչմանց և արտասանութեանց ձայները: Ապա թէ ոչ նորա գրածն կը լինի մի այլանդակ խառնուրդ:

Հին մատենագրական և նոր-գրական. բան, գործ, գալ, ուլ, դա-տարկ, գա-ւար, լաւ, ևն:

Արցախի-տեղական. բէան, գէործ, գէալ, հէօլ, լէաւ, ևն:

.... **Օտարական.** Գէոր-գի» (Լաստիվերտցի), «Գէօր-գի, Էօ-մար».... (Զաքար. Սարկ.), Դէ-լի Ղար-տաշ, ևն. (Ծահիսարունեան): Սյոյ կարգին են պատկանում և քաջերից ոմանց անուններն, ինչպէս են Տէօվ, Նէառ, Տէ-տէ. և ոչ թէ ըստ պարոնի Տով, Նառ, Եր. 32: ևն»[10]:

Լեռն, հետեւելով «Գաղտնիք»-ում պատմության ոգին ու անցքերը մեկնելու նպատակով դիտված «ընդհանուր ակնարկին», նյութից հանելով որոշակի մտքեր, բանաձեւում է իր այն ընդհանրացումը, որ պարսիկների, հորվմեացիների, հույների, օսմանցիների, արխազցիների եւ այլոց անընդհատ արշաւանքները համարյա թե անկարող

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Են եղել վնասել Մեծ եւ Փոքր Սյունիքների կյանքին:

Լեռն «Երևէլի պատմագէտի» (իմա՝ Բեկնազարյանցի) գրածը համարում է «մի նշանաւոր սուս, որ համարեա յայտնում է թէ հեղինակը ժամանակակից չէ» [11]:

Պրաեսզի ջններողոյին պարզի «Գաղտնիք»-ում ցուցված իհմնական գաղափարը, Բարխուտարյանը հարցի վերաբերյալ ստիպած մնջրերում է այն հատվածը, որը Լեռն միտումնավոր բաց է թողել, եւ որում նշված են Արցախի կյանքի երեք կողմերին հարվածող արտաքին եւ ներքին գորեղ գործոնները. «Պարսից, Հռովմայեցոց, Յունաց, Օսմացոց, Ավինազցոց, Կրացոց և Տաղստանցոց անընդհատ արշաւանքներն, որը իրեանց անդիմադրելի զօրութիւններով այնքան վնասներ պատճառեցին Հայաստանի բոլոր մասերում քնակվող Հայ ժողովրդեան կրօնական, քաղաքական և քարոյական համազգային կենաց, արտաքին գոլով, համարեա թէ անկարող եղած են վնասել Մէծ և Փոքր-Սիւնեաց և ոչ մի կենաքին»[12]:

«Գաղտնիք»-ից (էջ 71-72) բերված հատվածները հերքում են Լեռի մտքերը եւ բացահայտում նրա՝ «Գաղտինք»-ը մերժելու նպատակները:

Բարխուտարյանը կարծում է, որ Լեռն դիտնամբ է բաց թողել «արտաքին» եւ «ներքին» բառերը եւ չընդունելով պատմության ողին՝ հանգում է այն եզրակացության, որ Հայաստան արշավոր բռնավորները «Վնասել են» Մէծ եւ Փոքր-Սյունիքների կյանքին, եւ ստախոս է համարում Բեկնազարյանցին:

Նա համոզված է ներքին թշնամու հասցրած հարվածների կործանիչ լինելու մեջ. «Ո՞վ այնքան վնասեց Հայաստանի զինուորական կենաքին.- թէ ոչ միայն մի համարին Հայ, մի ներքին թշնամի Մեհրուժան: Ո՞վ սպանեց Արշակունեաց հարիւրաւոր տարիներ ապրող բազաւորութիւնը, արտաքի՞ն թշնամին թէ՝ ներքինն....»

Մինչեւ Հայաստանում, ամենուրեք մեռած էր հայկական, մարմնաւոր իշխանութիւնն, երկու Սիւնիքում դեռ կենդանի էր Հայ մելիքութիւնն: Երբ զանազան տեղերում եղած էր և լինում էին հայկական կրոնափօխութիւններ, երկու Սիւնիքում յարաւում էին կրօնական և քարոյական կեանքերն: - Հարկավ, Բարխուտարյանը ճիշտ դատություններ է անում: Հասուն տարիքում Լեռն այլ կերպ կմտածեր, քան «Վէ՞ս թէ պատմութիւն» գրելու՝ 25-26 տարեկան հասակում... իսկ դա գիտնական կոչվելու համար անշահ վաղ էր... - Պուրեմն, - շարունակում է քննաբանը, - այդ երեք կեանքին թաքարներն վնասեցին թէ Լանկ-Թամիլիներն, Պարսից Շահե՞րն թէ Օսմանեան Սարդ-Սուլստաֆաներն: - հեղինակն ասում է ոչ սոքա և ոչ նոքա. քանզի դոցա անյայտանալուց շատ յետոյ դեռ ապրում էին երկու Սիւնիքում մելիքութիւնն, կրօնական և քարոյական կեանքերն, այլ վնասեցին Սելիլ-Շահ. Գ. Ճռ-մելիքներն և Ճռ-կուրականներն ներքին թշնամիներն»[13]:

Այսուհետեւ Լեռն հիշեցնում է Ղարաբաղը ավերողներին՝ Լենկթեմուրին, որ անցել է այդ երկրով, Շահ-Արամին, որ արշավել է դեպի Թիֆլիս, թաթարներին, որոնք աշխարհավեր սրածությունից հետո հաշենի եւ Հաթերքի իշխան Զալալին սպանեցին:

Թարգմանիչը հաճախ է մեկնաբանություններ անում այդ ամենի շուրջ: Լեռն հեգնական շեշտով գրում է. «Մեզ ասում են թէ Ապրես Բէկնազարեանցը ականատես պատմիչ է և թէ նրան դեկավարող հայրը «Երևէլի պատմագէտ» էր: Սակայն ինչո՞ւ այդ նորագոյն Եղիշէն Զաքարիայի պէս պապանծուել է այս սուկալի զազանութիւնների մասին.... ընդհակառակն մի շարք վիպական գործողութիւններով նա ցոյց է տալիս, թէ այդ «հրէշ»-ը խոնարիուել էր մի հայ մելիքի արաջ, որին յանձնել էր իր բոլոր իրաւունքները, իր կամքը, իր բոլոր զօրքը (եր. 30), մի խօսքով ամբողջ այդ արշաւանքի գլուխ էր կանգնացրել նրան»[14]: Նկատելի է, թէ ինչպես էր Լեռն ամեն կերպ փորձում «Գաղտինք»-ը վիպական գործ համարել (որն, անշուշտ, այդպիսին է), այն անարժեք դիտելու համար:

ՄԵՐՈՐԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ի պատասխան Լեոյի՝ թարգմանիչը երկողմանի բնույթ հատկանշող օրինակներ է բերում տարբեր հեղինակներից՝ բացատրում է դրանք, իմանավորում բնագրային օրինակով, զուգահեռ բացահայտելով հերոսներին քնարական եւ պատմական, առասպելական երանգներով։ Իսկ հերոսները միայն հայ ազգության չեին ու մի ժամանակաշրջան չեին ներկայացնում։ ակամայից թարգմանիչը դարձել էր իր հայրենակից պատմիչի արժեքավոր գործի պաշտպանը։ Կարծում ենք Ա. Բեկմազարյանը ճիշտ է կրահել, թե ում Վստահի իր գործի՝ դարւն ու փորձություններով լի «Գաղտնիք Ղարաբաղի»-ի ճակատագիրը։ ««Գաղտնիք»-ի հեղինակը ներկայացնում է Ներքինի-Շահի լաւ կողմերի հետ եւ վատր. «....հետրզեստէ Կուր գետի մէջ նետուեցան Շահի անողորմ հրամանաւ շատ վրացի ազնուական, կղերական և ժողովրդական մարդիկ։ Շահն, կամրջի վերայ նստած, զուարձանում էր այս ցաւալի տէսարաննէրով ևն.» («Գաղտնիք», Եր. 165-166)։ Բաց յանցանէ պախարակում է և սոյն Շահի անլուր թարբարոսութիւնը և անխիղձ անգրութիւնները - «Եզիտ-Խմբանի»-ն (ճարդաշան) (նոր պայտած ծիերով կոյսկրտել է անգեններին- Զ. Բ.), նոյն երես 232-233։

Այժմ,- ընդհանրացնում է Ա. Բարիխուտարյանը,- թողնում ենք ընթերցողաց վճռել։ Ո՞վ է շատ յանցաւորն:- «Սի հայ, մի քրիստոնեայ գորո շատ յանցաւոր է»։ Թէ մի հայ, մի քրիստոնեայ կարդացողն շատ յանցաւոր է։ Այդ արարմունքն առիթ է տալիս նեզ ասել կամ պարոնն կարդում է թղթի մի երեսը միայն.... կամ ճգնում է պարզամիտների համարնանց մէջ ստորացնել «Գաղտնիք»-ի վարկը»։

Երբէք զարմանալի երևոյթ չէ, որ Շահն պարզեած է պատուանշան և Մելիք-Մեժլումին և իր զօրքերն կուտորող Բէկմազարեանցին։ Արդէն շատ վեհապեսներ

Վարուած են և Վարուում են այդպիսի քաղաքականութեամբ, այսինքն է քաջ մարդիկ ծեռք առած են քաղաքական նպատակներ յառաջ տանելու....»[15]։

Ռաֆֆու հերումների վերաբերյալ Բարիխուտարյանը դիտում է. «Պարոն Ռաֆֆին կարծում է թէ 1795-ին Ներքինի-Շահն ունեցած չէ շքանշան, որը պարզէր Մելիք-Մեժլումին։ Արդէն 1188-ին Ուրմինեան Լևոն թագաւորն կորում էր Ա. Պետրոսի նշանը, որը դրկած էր Իննակենդիոս Գ. պապն (Սիսուան, Եր. 484, էջ 2)։ Հաստատում են որ շքանշանն գործածական դարձած է Եւրոպական տէրութեանց մէջ սկսած ժեւ. դարում Գաղղիացոց Լուդովիկոս ԺԴ-ից և սորա միմիստր Լուվայիցն։ Ուստաստան մտած է Մեծին-Պետրոսի օրով և ապա մտած է Պարսկաստան վիոր ինչ յետոյ»։ Եվ հետեւությունը. «Ապա ուրեմն Երբէք զարմանալի չէ, որ Ներքինի Շահն ևս, իր քաղաքական նպատակները յառաջ տանելու քաղաքականութեամբ, պարզեած է նշաններ և Մելիք-Մեժլումին և իր զօրքերը ջարդող Բէկմազարեանցին»[16]։

Թարգմանիչը մեկ առ մեկ ժխտում է Լեոյի դիտողությունները պատմության մէջ Եղած փաստերի վերաբերյալ՝ ընթերցողի ուշադրությունը կենսորումացնելով իրերի ու Երեւույթների ճշգրիտ մեկնության վրա։ Իսկ Լեոն նշում է. «Ամբողջ Թիֆլիսը թարութանդ անող Աղա-Մանադ-Շահի գործերը նկարագրում են ժամանակակից ականատեսները և ի հնչքն են նկարագրում. Կայ և իշխան Եգոր Խուլբովի հետաքրքիր յիշատակարանը, որի ռուսերէն թարգմանութիւնը տպուել է Պետերբուրգում 1811 թուին «Օպոսանի ծօտոպամյանիք պրուսաւութեամբ» վերտառությամբ։ Այդ Երկու ճշգրիտ աղբիւրները ներկայացնում են Շահին մի մարդակեր գազանի պատկերով....։ Եաղուր իսանն էլ եղել է Շուշին պաշարող զօրքի մէջ, բայց յիշում է միայն Մելիք-Մեժլումին, որ Զաւադ-խանի հետ եկել էր «շահի դուռն»[17]։

Թարգմանիչը, առարկելով Լեոյին, բացատրում է, որ, քանի որ հայերն ատելի էին Յաղուր խանին, ոչ նա է Բէկմազարյանցին հայտնել իր հայ լինելը եւ ոչ էլ վերջինս է իմացել, որ նա հայ է։ Ենտեւապես Երկուսն էլ չեն գորել այդ մասին։

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2017

Ետոն իգուր է կարծում, թե «Գաղտնիք»-ը փաստացի չի ներկայացրել Աղա Մահմետ շահի արշավամբը ու նրա կատարած բարբառոսությունները քրիստոնյաների հանդեպ. դրանք ցոյց են տրված Թիֆլիսի գրավման, ավերման ժամանակ եւ շարադրված են գրքի 165-166, 232-233 էջերում:

Ներքինի-շահի զորավարներից Յաղուր խանը՝ այդ չարաբաստիկ հայը, որն իր խոսուվանությամբ սկզբում ասում էր հայերին եւ զորքին դրորում էր կոստորել նրանց, որպես ականատես հայերի թշվարության մասին պատմում է հետեւյալը. «Մտանք Ղարաբաղի և Նուլու հողն՝ ինչպէս մորեխն.... Քանի հազարաւոր գերի քրիստոնեայք.... քրիստոնեայք եմ ասում, մի՞թէ բացի Հայոց ազգին, ուրիշ մին քրիստոնեայ ազգ կար էն տեղանք: Քաւ լիցի: Ողորմելի Հայերն անտէր անտէրունչ.... հա, Հայքն էին մեր գերիքն.... Զկարծէս թէ էն ողորմելեաց ողբն ու աղաղակը չէր հասնում շահի ականջն: Երբէք փոյթ չէր նրան էնքան ողորմելեաց արտասունքն, արդարութիւնը և իրաւունքը չէր գործ նրա գրքումն....»: «.... Հայերին այն ժամանակ մօտեցայ և ծանօթութիւն տուի որ հայ եմ, երբ Շահն սպանուած էր Շուշում և ես ամեն գոյքից և հազսից անզամ կողոպ-տուած փախչում էի գոյւխս զոնէ ազատել»[18]:

Ս. Բարխուդարյանը, Ետոյի հերքումների վերաբերյալ իր փաստարկումները գարգացնելով, «Քննադատութիւն քննադատութեանց»-ի էջերում փորձում է տեսականութեն-գրականագիտորեն «Գաղտնիք»-ը զնահատել ըստ ունեցած արժանիքների, այդքանով հանդերձ, ակամայից հաստատելով նաեւ գրքի վիպականության մասին Ռաֆֆու եւ Ետոյի «զնահատումները»: Այսպիսով, վիպական լինելու դեպքում միայն նրանք կարող են «Գաղտնիք»-ը անարժեք համարել (ամբողջ բանակրիվը դրա շուրջն է պստովում. վկան նաեւ Ետոյի գրքի վերնագիրը՝ «Վէ՞պ թէ պատմութիւն»), որ ապացոյց է Ռաֆֆու եւ Ետոյի կողմից ջանադիր կերպով հավառակը ապացուցելու՝ «Գաղտնիք»-ը վիպական գրվածք համարելու ջանքերի հավաստիությանը, որովհետեւ, ըստ Ռաֆֆու եւ Ետոյի, եթէ ապացուցի, որ «Գաղտնիք»-ը պատմականություն-փաստացիություն չունի, ուրեմն հորինվածք է՝ չեղած երեւոյների մասին, ժողովրդի հարազատ պատմությունը չի ներկայացնում, վիպական գործ է, ուստի անարժեք է այն, որոշ տեղերում էլ՝ միմիայն արտագրություն է «Խամսայի մելիքություններից»: Այսպիսով, եթէ «Գաղտնիք»-ը, ըստ տեսարանների, վիպական գիրը է (անշուշտ նաեւ այդպիսին է), ապա մելիքությունների հարազատ պատմությունը չի ներկայացնում՝ անարժեք է ու միայն «Խամսայի մելիքություններին» է վերապահված ներկայացնելու Արցախի մելիքությունների հարազատ պատմությունը:

Ցավոր սրտի, այս նույնը վերաբերում է նաեւ «Խամսայի մելիքություններին», որը Ռաֆֆին, գրականության միավոր համարելով, այնուամենայնիվ, ժանոր վկայակոչելով, այն անվանում է «Պատմական ուսումնասիրություն»: Ժամանակաշրջանի գրականության պահանջներից էր այդ բխում, ազգային գաղափարաբանության սկզբունքներից, թե՝ երկը արժեքավոր գտնելու գրական մոտեցումից, թե՝ օտարներին ազգային արժեքը միմիայն փաստացիության տեսանկյունից ներկայացնելու քաղաքական դիրքորոշումից: Բոլորով հանդերձ՝ երեւոյթը՝ քաղաքացիական այս կարեւոր վերաբերմունքը, պատմահայր Խորենացու գիտական պահկամքն է հիշեցնում՝ երկերը, վակերագրերը զնահատելի ընդունել առաջին հերթին պատմականության դիրքերից՝ այն տարբերությամբ, որ պատմիչը բարձր է զնահատել նաեւ հերանոսական բանավոր մշակույթը՝ կյանքով հասուցելով: Երեւոյթը առկա է նաեւ Ռաֆֆու, Ա. Բեկնազարյանի, Ս. Բարխուդարյանի եւ այլոց օրինակներում, Ռաֆֆու դեպքում, ինչպէս տեսնում ենք, հեղինակի կողմից գրական արժեք համարվող «Խամսայի մելիքությունները» պատմական ուսումնասիրություն է դիտված, Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարա-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԽՈՏՏՈՒ 2017

բաղի»-ին՝ վիպական գործ. հատկապես ժմտողական վերաբերմունք է ստեղծվել «Գաղտնիք»-ի շուրջ:

Ինչպես տեսնում ենք, թե՝ «Խամսայի մելիքություններում», թե՝ «Գաղտնիք Դարաբաղի»-ում անպայմանորեն արկա են վիպապատճական տարրերը, որոնք առանց կասկածի վկայում են այդ երկերի բարձր արժեքը եւ հեղինակների ազգային շահերից բխող խնդիրների հետապնդումն ու լուծումը, ազգային ճակատագրի վերհանումը, Արցախի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական, բարոյական, հասարակական, մշակութային կյանքի գեղարվեստականացումը:

Այդ երկերը գրականագիտորեն վերլուծելով, ըստ հարկի, օգտվել ենք աղբյուրագիտական, համեմատական, կառուցվածքաբանական, վերլուծական, վերագնահատության մեթոդներից, որոնց միջոցով ավարտին ենք հասցեր մեր ուսումնասիրությունը՝ օգտագործելով նաեւ նշանագիտական մեթոդը: Նշանագիտությունը (հիմնադիրներն են՝ ֆրանսիացի լեզվաբան Ֆ. Սոյուրը-1857-1913 թթ. եւ ամերիկացի տեսաբան Չ. Ս. Պիրսը - 1839-1914թթ.) ուսումնասիրման իր աղբյուրը ստանում է այլ գիտություններից, տեղական մետալեզուների՝ ծեռք բերված «գործիքների»-գիտական ապարատի միջոցով: Այս դեպքում մետալեզվի օգնությամբ պատմագիտությունից տեղափոխվել ենք գրականագիտական դաշտ, կատարել վերլուծություններ (նշանի-տեքստի միջոցով) եւ մեր ուսումնասիրության արդյունքները, որպես նշանագետ-գրականագետ, թողել այդ դաշտում (կարող է լինել հակառակը, որը այդ մեթոդի սկզբունքն է): Նշենք, որ այս վերջին՝ նշանագիտական մեթոդը միաժամանակ դառնում է կառուցվածքաբանական վերլուծությունների հաղթահարման արդյունք:

Փաստերով հերքելով Լեռի կասկածները «Գաղտնիք»-ի հավաստիության, պատմականության վերաբերյալ, որի տեղեկությունները, իրը, չէին համընկնում մեր Յաղուր խանի, մեր Եզրու խուրովի, մեր «Բազմավէպ»-ի ներկայացրածի հետ, Ս. Բարխուդարյանը, զարգացնելով տեսաբննական իր մեկնումները, նկատում է. «Ինչպէս իրաքանչչիր պատմաբան, նմանապէս դոցանից ամէն մին ունեցած է իր ուղղութիւնը, իր ընտրութիւնը և իր ուշ դարձրած պարագաները.... Բէկնազարեանց մանրամասնաբար նկարագրում է Եզիտ խրմանին, իսկ Եաղուր-խանն չէ նկարագրում: Առաջինն նշանակում է Տէխսսից Պարսկաստան տարրուած գերելոց թիւը, բայց վերջին՝ ոչ: Հետևապէս մի նորութիւն և մի զարմանալի Երևայթ չեն Բէնկազարեանցի և Խուրովի մէջ եղած անհամաձայնութիւններն Ֆաթալի-Շահի Երևան գալու մասին: Բայց արի, տես, որ Ուսաց յիշատակարանն ստարերուում է ականատես Խուրովից, քան զի սա ասում է որ Շահն 1804-ին դրկեց զԴանիի կաթողիկոսը Մարաղա քաղաքն, իսկ ուս յիշատակարանն (պաշտօն. նամակ) 1805 թուին»[19]:

ԾՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1. Մակար Վ. Բարխուտարեանց, Քննադատութիւն քննադատութեանց, Տիկիսիս, տպարան Ս.Դ. Ռուտինեանի, 1888 (այսուհետեւ՝ Մակար Վ. Բարխուտարեանց), էջ 3, 4:
2. Լէօ, Վէ՞պ թէ պատմութիւն, Շուշի, Տպարան Հայոց Հոգեւոր Տեսչութեան, 1887 (այսուհետեւ՝ Լէօ), էջ 3:
3. «Փորձ», Երկրորդ տարի (1878, «Փորձ» 1876-1881), Երես 243, տես Լէօ, էջ 23-24:
4. Լէօ, էջ 24:
5. Լէօ, էջ 27-28, տես Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 39:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ՂՈՒՄՈՒ 2017

6. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 39:
7. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 41-42:
8. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 42-43:
9. Լէօ, էջ 32:
10. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 44-45:
11. Լէօ, էջ 37:
12. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 46:
13. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 47-48:
14. Լէօ, էջ 37, 59:
15. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 58-60:
16. Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 60-61:
17. Լէօ, էջ 57-58, տես Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 64-65:
18. «Արարատ», 1877, թիվ Ը., եր. 294-295, 333-336, 370-383, տես Լէօ, էջ 58, տես Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 63-64:
19. Տես Հօգուածական ակտեր, հատոր Բ, երես 864, տես Մակար Վ. Բարխուտարեանց, էջ 66-67:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Մակար Բարխուտարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը Եւ 19-րդ
դարավերջի հայ գրականության քննադաշտը
Զինահյա Բալայան**

1886թ. Սամկու Պետերբուրգում Մակար Վարդապետ Բարխուտարյանի թարգմանությամբ (գրաբարից աշխարհաբար), Առաքել աղա Շատուրյանի մեկենասությամբ հրատարակվել է Ապրես Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության շուրջ պարբերական մամուլում լույս են տեսել դրական եւ բացասական կարծիքներ, գնահատումներ, գրախոսություններ, հրատարակվել են ուսումնասիրություններ (Ռաֆֆի, «Գաղտնիք Ղարաբաղի», Լեո, «Վէ՞պ թէ պատմութիւն», Մ. Բարխուտարյան, «Քննադատութիւն քննադատութեանց»): Վերջնական արդյունքում աշխատությունն ամբողջությամբ արժեքագրվել եւ մերժվել է:

Մ. Բարխուտարյանի «Քննադատութիւն քննադատութեանց»-ը պատասխանում է այդ պոլեմիկական հարցերին:

Այս տեսանկյունից ուսումնասիրվող նյութը ձեռք է բերում գիտական արդիական հնչողություն՝ կատարված գրաքննադատական վերլուծական նոր համակարգի՝ մեկնաբանական (հերմենեւտիկ) եւ արժեքաբանական (աքսիոլոգիական) քննումների գուգորդմամբ:

РЕЗЮМЕ

Книга Макара Бархударяна “Критика критики” и армянская

литературная критика конца XIX в.

Зинаида Балаян

Ключевые слова: 1886г., грабар, современный армянский язык, рецензии, “Тайна Карабаха”, историческое исследование, Лео, “Роман или история?”, герменевтический, аксиологический

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с грабара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела-ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Апреса “Тайна Карабаха”.

Вокруг этой книги в периодической печати вышли отрицательные и положительные отзывы-оценки, рецензии, а также были опубликованы исследования (Раффи “Тайна Карабаха”, Лео “Роман или история?”, Макар Бархударян “Критика критики”). В конечном итоге это исследование целиком было обесценено и отвергнуто. Книга Макара Бархударяна “Критика критики” отвечает на эти полемические вопросы. С этой точки зрения, исследуемый материал приобретает современное и научное звучание. Он выполнен в русле современной критико-аналитической (герменевтической) и оценочной (аксиологической) новой системы.

SUMMARY

Makar Barkhudaryan's “Criticism of Critique” and the Armenian Literary Criticism
at the end of the XIX cent.

Zinaida Balayan

Keywords: 1886, Grabar, Modern Armenian, reviews, the “Mystery of Karabakh”, historical investigation, Leo's “A Novel or History”, hermeneutic, axiological.

Historical investigation of the “Mystery of Karabakh” by Apres Begnazaryan (translated from Grabar into Modern Armenian by Makar Barkhudaryan) was published in St. Petersburg, in 1886 under the patronage of Arakel-agha Tsaturyan. There were negative and positive references and reviews about this book in periodical press. Researches like Raffi's the “Mystery of Karabakh” and Leo's “A Novel or History”, M.Barkhudaryan's “Criticism of Critique” were also published. However, finally the investigation was depreciated and completely rejected.

Makar Barkhudaryan's “Criticism of Critique” answers these polemical questions. Thus, from this point of view the investigated material provides modern and scientific touch. It is carried out in the framework of a new critical-analytical (hermeneutic) and estimative (axiological) system.